



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆՁԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ №184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑՎ**

**ՊՈԱԿ-Ի**

**2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ ՏԱԹԵՎԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆ**

**ՆԱԽԱԲԱՆ**

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ դպրոց) 2023-2024 ուսումնական տարվա գործունեության ներքին գնահատումն իրականացվել է դպրոցի տնօրենի՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ի № 103001-Ա հրամանով ձևավորված ներքին գնահատում իրականացնող հանձնաժողովի կողմից: Ներքին գնահատման հաշվետվության մեջ ներառվել են դպրոցի ներքին գնահատման ցուցանիշների և չափանիշների, խորհրդակցական մարմինների կողմից դպրոցի գործունեության ոլորտների վերաբերյալ տրված գնահատումների տվյալները:

Ցուցանիշների և չափանիշների հաշվարկման ժամանակ կիրառվել են հետևյալ մեթոդները՝

- վիճակագրական տվյալների վերլուծություն.
- փաստաթղթային վերլուծություն.
- դիտարկում կամ փաստագրում:

Դպրոցի գործունեության ներքին գնահատման գործընթացը ներառել է հետևյալ երեք բաղադրիչները՝

- մեկնարկային պայմանների (ռեսուրսների) գնահատում.
- գործունեության ընթացիկ գնահատում.
- գործունեության արդյունքների գնահատում:

Ներքին գնահատման չափանիշները բխում են հանրակրթության պետական չափորոշչով սահմանված պահանջներից և ներառում են՝ սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերումը, արժեքային համակարգի ձևավորումը, սովորողների զարգացմանն ուղղված գործողությունների առաջնայնությունը, դպրոցի տարեկան աշխատանքային ծրագրում դրանց արտացոլումը, իրականացման արդյունավետությունը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| ՄԱՍ | ՎԵՐՆԱԳԻՐ | ԷԶ |
|-----|----------|----|
|-----|----------|----|

|              |                                                                                                                |           |
|--------------|----------------------------------------------------------------------------------------------------------------|-----------|
| <b>ՄԱՍ 1</b> | <b>Ընդհանուր տեղեկություններ դպրոցի մասին</b>                                                                  | <b>4</b>  |
| <b>ՄԱՍ 2</b> | <b>Դպրոցի սովորողների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունը և առողջության պահպանումը</b>                 | <b>8</b>  |
| 2.1.         | Ս. Խանգադյանի անվան № 184 ավագ դպրոցը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը                         |           |
| 2.2.         | Դպրոցի շենքի և դրա շահագործման անվտանգությունը նկարագրող չափանիշները                                           |           |
| 2.3.         | Դպրոցի նախագծային հզորությունը նկարագրող ցուցանիշներ և չափանիշներ                                              |           |
| 2.4 .        | Դպրոցի անձնակազմի և սովորողների անվտանգ կենսագործունեությունը նկարագրող չափանիշներ                             |           |
| 2.5.         | Ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջության չափանիշներ                                                          |           |
| <b>ՄԱՍ 3</b> | <b>Դպրոցի գործունեության արդյունավետություն</b>                                                                | <b>21</b> |
| 3.1.         | Դպրոցի սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշները                                                     |           |
| 3.2.         | Դպրոցի ուսուցիչներին և նրանց գործունեությանը վերաբերող ցուցանիշներ                                             |           |
| 3.3.         | Դպրոցի ուսումնական միջավայրին և ծառայություններին վերաբերող ցուցանիշներ և չափանիշներ                           |           |
| 3.4.         | Դպրոցի ներքին արդյունավետության ցուցանիշները                                                                   |           |
| <b>ՄԱՍ 4</b> | <b>Դպրոցում ներառական կրթության և հավասարության ապահովում</b>                                                  | <b>36</b> |
| <b>ՄԱՍ 5</b> | <b>Համայնքային մասնակցություն</b>                                                                              | <b>40</b> |
| <b>ՄԱՍ 6</b> | <b>Դպրոցի հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները</b> | <b>54</b> |

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023-2024 ուսումնական տարի

### ՄԱՍ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

Դպրոցի անվանումը, համարը **ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ Ս. ԽԱՆՉԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ. 184 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

Դպրոցի հասցեն՝ **Երևան, Գոլասան Շերամի 103/3**

Դպրոցի հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն՝ (010) 727330, [school184@schools.am](mailto:school184@schools.am)


Դպրոցի պաշտոնական կայքի հասցեն՝ [yerevan184.schoolsite.am](http://yerevan184.schoolsite.am)

### Դպրոցի առաքելությունն է՝

**«Նոր որակ և նոր արդյունք՝ մասնակցային, թափանցիկ և հաշվետու աշխատանոցով»:**

### Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիներին

| Դասարաններ                    | Դասարանների թիվն՝<br>ըստ ուստարիների |                      |                      | Փոփոխությունների<br>դինամիկան<br>(աճ կամ նվազում) |
|-------------------------------|--------------------------------------|----------------------|----------------------|---------------------------------------------------|
|                               | 2021-2022<br>ուստարի                 | 2022-2023<br>ուստարի | 2023-2024<br>ուստարի |                                                   |
| 10-րդ դասարան                 | 9                                    | 9                    | 9                    | անփոփոխ                                           |
| 11-րդ դասարան                 | 7                                    | 9                    | 9                    | աճ, անփոփոխ                                       |
| 12-րդ դասարան                 | 9                                    | 7                    | 8                    | նազում, աճ                                        |
| <b>Ընդամենը<br/>(դասարան)</b> | <b>25</b>                            | <b>26</b>            | <b>26</b>            | <b>աճ, անփոփոխ</b>                                |



Չնայած վերջին երկու ուսումնական տարիներին դասարանների թիվն անփոփոխ է, սակայն սովորողների թիվը աճել է 79-ով: Դա պայմանավորված է դպրոցի նկատմամբ համայնքի հետաքրքրության մեծացմամբ:

**Աղյուսակ 2. Ըստ դասարանների՝ սովորողների թիվը ընթացիկ և նախորդ ուստարիների համար**

| Սովորողների թիվը | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|------------------|-------------------|-------------------|-------------------|---------------------------------------------|
| 10-րդ դասարան    | 161               | 193               | 192               | աճ, նվազում                                 |
| 11-րդ դասարան    | 135               | 162               | 199               | աճ, աճ                                      |
| 12-րդ դասարան    | 166               | 138               | 181               | նվազում, աճ                                 |
| Ընդամենը         | 462               | 493               | 572               | աճ, աճ                                      |

**Աղյուսակ 3. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ ուստարիների համար**

| Ցուցանիշը                                                                                 | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | 2023-2024 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|-------------------------------------------------------------------------------------------|-------------------|-------------------|-------------------|---------------------------------------------|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 462               | 488               | 528               | աճ, աճ                                      |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ տարվա մայիսի 25-ի դրությամբ    | 462               | 493               | 572               | աճ, աճ                                      |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը                                    | 40                | 22                | 77 /37 ԼՂ/        | նվազում, աճ                                 |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը                                      | 34                | 20                | 34 /8 ԼՂ/         | նվազում, աճ                                 |

**2023-2024 ուստարում դպրոցից հեռացած 34 սովորողներից 8-ը մեկնել են արտերկիր:**

**Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ ուստարիների համար**

| Ցուցանիշը                                                                  | 2021-2022<br>ուստարի | 2022-2023<br>ուստարի | 2023-2024<br>ուստարի | Փոփոխությունների<br>դինամիկան<br>(աճ կամ նվազում) |
|----------------------------------------------------------------------------|----------------------|----------------------|----------------------|---------------------------------------------------|
| Ուսուցիչների ընդհանուր թիվը                                                | 47                   | 39                   | 37                   | նվազում, նվազում                                  |
| Ուսուցիչների միջին<br>շաբաթական<br>ծանրաբեռնվածությունը կամ<br>դրույքաչափը | 24                   | 21                   | 24                   | նվազում, աճ,                                      |

Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածության փոփոխությունը պայմանավորված է ուսուցիչների թվի նվազումով:

**Աղյուսակ 5. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուստարիների համար**

| Ուսուցիչների թիվը                | 2021-2022<br>ուստարի | 2022-2023<br>ուստարի | 2023-2024<br>ուստարի | Փոփոխությունների<br>դինամիկան<br>(աճ կամ նվազում) |
|----------------------------------|----------------------|----------------------|----------------------|---------------------------------------------------|
| Մինչև 30 տարեկան                 | 5                    | 3                    | 4                    | նվազում, աճ                                       |
| 31-ից 40 տարեկան                 | 16                   | 14                   | 7                    | նվազում, նվազում                                  |
| 41-ից 50 տարեկան                 | 12                   | 9                    | 8                    | նվազում , նվազում                                 |
| 51-ից 55 տարեկան                 | 4                    | 5                    | 7                    | աճ, աճ                                            |
| 56 տարեկան և ավելի               | 10                   | 8                    | 11                   | նվազում, աճ                                       |
| <b>Ընդամենը՝<br/>ուսուցիչներ</b> | <b>47</b>            | <b>39</b>            | <b>37</b>            | նվազում, նվազում                                  |

Ուսուցիչների տարիքային կազմի փոփոխության պատճառները՝ տարիքային համաչափ փոփոխությունն է:

Դպրոցում աշխատող ուսուցիչները հիմնականում 41-ից բարձր տարիքի են:

**Աղյուսակ 6. Տվյալներ դպրոցի ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ 2023-2024 ուստարի**

| Ազգանուն,<br>անուն,<br>հայրանուն | Պաշտոնը                        | Տվյալ պաշտոնում<br>աշխատելու<br>ժամանակահատված<br>ը   | Դպրոցում աշխատելու<br>ժամանակահատվածը                                | Պետական<br>պարգևներ,<br>կոչումները |
|----------------------------------|--------------------------------|-------------------------------------------------------|----------------------------------------------------------------------|------------------------------------|
| Մելքոնյան<br>Տաթևիկ<br>Մամիկոնի  | տնօրեն                         | 2023թ. փետրվարի<br>2-ից, որպես տնօրեն                 | 2022թ. հուլիսի 1-ից,<br>որպես տնօրենի<br>ժամանակավոր<br>պաշտոնակատար |                                    |
| Դիլանյան<br>Լուսինե Արամի        | տնօրենի<br>տեղակալ             | 2023թ. օգոստոսի 24-<br>ից մինչև 2024 թ.<br>մարտի 25-ը | 2013թ. օգոստոսի 30-ից,<br>որպես<br>սոցմանկավարժ<br>ուսուցիչ          |                                    |
| Գևորգյան<br>Գոհարիկ<br>Պավլիկի   | տնօրենի<br>տեղակալ             | 2024թ. մարտի 25-ից                                    | 2024թ. մարտի 25-ից                                                   |                                    |
| Թադևոսյան<br>Աննա<br>Վարդանի     | տնօրենի<br>տեղակալ ՄԿԱ<br>գծով | 2020թ. սեպտեմբերի<br>1-ից                             | 2003թ. դեկտեմբերի 1-<br>ից, որպես<br>ֆիզկուլտուրայի<br>ուսուցիչ      |                                    |

|                                  |                                                      |                                                                                      |                                                                 |  |
|----------------------------------|------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------------------|--|
| Բաղդասարյան<br>Մարտին<br>Թորգոմի | տնօրենի<br>տեղակալ<br>տնտեսական<br>աշխատանքի<br>գծով | 2002թ. փետրվարի<br>1-ից մինչև 2024թ.<br>հունվարի 26-ը<br>հունվարի 26-ից՝<br>տնտեսվար | 2001 թ. սեպտեմբերի 1-<br>ից՝ որպես<br>ինֆորմատիկայի<br>ուսուցիչ |  |
| Մովսեսյան<br>Էռնա Վարիկի         | գլխավոր<br>հաշվապահ                                  | 2003 թ. նոյեմբերի 14-<br>ից                                                          | 2003թ. նոյեմբերի 14-ից                                          |  |

## Աղյուսակ 7. Տվյալներ դպրոցի կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

**«Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի  
կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմը՝ հաստատված  
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի հունիսի 25-ի N1017-Ա/2 հրաման**

| ԱԱՀ                                        | Պաշտոնը                                                                                                                        |
|--------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <b>ՀՀ ԿԳՄՍ նախարարի ներկայացուցիչ</b>      |                                                                                                                                |
| Սիրանուշ Էլոյան                            | ՀՀ ԿԳՄՍՆ անձնակազմի կառավարման վարչության գլխավոր<br>մասնագետ                                                                  |
| Արկադի Պապոյան                             | ՀՀ ԿԳՄՍՆ արտաքին կապերի և սփյուռքի հետ կապի վարչության<br>պետ                                                                  |
| Օվսաննա Բաղդասարյան                        | ՀՀ ԿԳՄՍՆ իրավաբանական վարչության դատական գործերի<br>բաժնի պետ                                                                  |
| Տիգրան Արմիկյան                            | Երևանի հ. 105 ավագ հ. 105 ավագ դպրոցի տնօրենի տեղակալ<br>ՄԿԱ գծով                                                              |
| <b>Երևանի քաղաքապետի ներկայացուցիչ</b>     |                                                                                                                                |
| Սիլվա Ղազարյան                             | Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի<br>աշխատակազմի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական<br>բաժնի առաջին կարգի մասնագետ |
| <b>Մանկավարժական խորհրդի ներկայացուցիչ</b> |                                                                                                                                |
| Արև Միքայելյան<br>/Նախագահ/                | Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոցի ուսուցիչ                                                                         |
| Նարինե Առաքելյան                           | Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոցի ուսուցիչ                                                                         |
| <b>Ծնողական խորհրդի ներկայացուցիչ</b>      |                                                                                                                                |
| Անահիտ Հակոբյան                            | Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոցի ծնող                                                                             |
| Կարինե Ավագյան                             | Երևանի Ս. Խանգադյանի անվան հ. 184 ավագ դպրոցի ծնող                                                                             |

2023 թ. սեպտեմբերի 11-ի նիստի որոշմամբ փոփոխություններ են  
կատարվել դպրոցի կառավարման խորհրդի կազմում (տե՛ս Աղյուսակ 7):  
Հրավիրվել է 9 նիստ, որոնք արձանագրված են:

2023-2024 ուսումնական տարում դպրոցի կառավարման խորհրդի նիստերում քննարկվել և հաստատվել են տարեկան և եռամսյակային ծախսերի նախահաշվային նախագծերը՝ հաշվի առնելով ծախսային նախագծերի վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները: Խորհուրդը լսել է տնօրենի և հաշվապահի զեկուցումները դրամական միջոցների հոսքի և փաստացի ծախսերի, շահույթի բաշխման ուղղությունների և չափի մասին:

Կառավարման խորհրդի համաձայնությամբ դպրոցի աշխատողներին տրվել են լրավճարներ:

Կառավարման, մանկավարժական և ծնողական համատեղ նիստում միաձայն որոշվել է հավանություն տալ դպրոցի նորակառույց մարզադահլիճը ՀՀ Ազգային հերոս Վազգեն Սարգսյանի անունով անվանակոչմանը:

Կառավարման խորհուրդն աշխատել է արդյունավետ՝ նպաստելով կրթական գործընթացի բարելավմանը:

## **ՄԱՍ 2. ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ**

### **1. ԴՊՐՈՑԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Ե ԾԵՆՔԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ԱՆՎՏԱՆԳ ԾԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ:**

Դիտարկման ամսաթիվ՝ ամենօրյա ընթացիկ հսկողություն, ինչպես նաև հանձնաժողովի մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից 2023 թվականի սեպտեմբերի 15 և 2024 թվականի 19:

Դպրոցի տարածքը մոտակա շինությունների կողմից առանձնացված է քարե պարիսպով, և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար: Բակը մասնակի ասֆալտապատված է, կանաչապատ է և ծաղկապատ: Գործում է դպրոցի մուտքերի և բակի տեսահսկման համակարգ:

**Դպրոցի բակը ասֆալտապատման և ոռոգման համակարգի անցկացման կարիք ունի:**

1. Դպրոցի մոտակայքում չկան աղմուկի և օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներ: Առավոտյան՝ ժամը 8.00-8.30, դպրոցի աշխատակիցները դիմավորում են սովորողներին: Դպրոցն ունի բացվող մեծ դարպաս, և արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին (հիմք՝ դպրոցի պլան-հատակագիծը):

2. Դպրոցի տարածքը մաքուր է և կանաչապատ. այն մաքրվում է ամեն օր: Այգու և կանաչապատմամբ զբաղվում են սովորողները՝ դպրոցի աշխատակիցների և ուսուցիչների աջակցությամբ: Բակում տեղադրված են աղբամաններ, աղբահանությունը կանոնավոր կազմակերպված է: Դպրոցի լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոններ առկա չեն: Դպրոցի ամբողջ տարածքում պարբերաբար միջոցառումներ են իրականացվում կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ:

### **3. ԴՊՐՈՑԻ ԾԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ԾԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Դպրոցն ունի 1 մասնաշենք, որում առկա են՝ գրապահոց, համակարգչային կաբինետ, բուժենյակ, բուֆետ (չի գործում՝ սանիտարահիգիենիկ պայմաններից ելնելով), ուսուցչանոց, 23 դասասենյակ, ուսումնական գենքի պահպանության սենյակ, քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության լաբորատորիաներ, որոնք ծառայում են նաև որպես դասասենյակ: Դպրոցն ապահովված է ինտերնետային մշտական կապով: 2023 թվականի ընթացքում դպրոցի գրապահոցը մասնակի վերանորոգվել է: Գրապահոցում և միջանցքներում ստեղծվել են ընթերցանության անկյուններ:

Դպրոցը հիմնանորոգման կարիք ունի: Շենքի փաստացի սեյսմակայունությունը որոշված չէ: Խոցելիության աստիճանը բարձր է:

Դպրոցի շենքում առկա են դեպի դուրս բացվող 3 պահուստային և 1 հիմնական ելքեր, որոնց բանալիները գտնվում են պահակային ծառայության կետում: Պարբերաբար ստուգվում են պահուստային դռների հուսալիությունը:

Դպրոցն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով՝ Էլեկտրական չչափով: Այն 2024 թվականի մայիսի 6-ին, ժամը 11:00-ին «Ազդարարում, տարհանում, պաստպարում» թեմայով հատուկ տակտիկական ուսումնավարժության ընթացքում չչափը չգործեց: Մայիսի 7-ին ՆԳՆ փրկարար ծառայության կողմից վերականգնվել է անսարքությունը և հաջողությամբ փորձարկվեց:

Դպրոցի շենքի հարկաբաժինները և սանհանգույցները ապահովված չեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների պահանջներին: Դպրոցի հիմնական մուտքն ունի թեքահարթակ և լայն դռներ:

Համակարգչային սարքավորումները, հեռուստացույցները ամրացված են աշխատատեղերին: Անիվներով տեղաշարժվող ծանր իրեր չկան:

Դպրոցի կահույքի բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը: Դպրոցի միջանցքների հատակները սայթաքում չեն, ուղեգորգով ծածկված տարածքներ չկան: Դպրոցի պատուհաններից հեռացվել են մետաղյա ճաղավանդակները:

Հակահրդեհային անվտանգությունը պահպանելու համար դպրոցում պարբերաբար ստուգվում են Էլեկտրահաղորդալարերի ցանցը, Էլեկտրական սարքավորումները: Դպրոցի ղեկավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահում հակահրդեհային անվտանգության պահանջների կատարումը: Դպրոցում բացակայում են ներքին և արտաքին հակահրդեհային ջրամատակարարման միջոցները (հրշեջ-ծորակներ, հիդրանտներ): Դպրոցի բակում կա 1 գործող ցայտաղբյուր: Հակահրդեհային անվտանգության լրակազմից կան վահանակ՝ անհրաժեշտ պարագաներով, կրակմարիչներ, որոնք սարքին և պատրաստ վիճակում են, տանիքը պատված է հրակայուն նյութերով:

Դպրոցում ոչ կառուցվածքային վտանգներ չկան (բացառությամբ շենքի նկուղների, որոնք չեն համապատասխանում անձնակազմի պատասպարման համար նախատեսված ՆԳՆ ՓԾ չափորոշիչներին):

Դպրոցում կա ՀՀ ՆԳՆ ՓԾ ԵՓ վարչության պետի և դպրոցի տնօրենի կողմից հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույց, մշակված է սովորողների և անձնակազմի տարհանման պլան: Դպրոցի նախասրահում և բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Դպրոցում չեն օգտագործվում դյուրավառ նյութեր: Դպրոցի ստորին հարկերի պատուհանները

ճաղավանդակներ չունեն: Տարիանման հիմնական և պահուստային դռները բացվում են դեպի դուրս և պարբերաբար ստուգվում է նրանց գործածելիությունը:

Դպրոցում պահպանվում են հակահրդեհային անվտանգության կանոնները:

Դպրոցի տարիանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով:

Դպրոցի աշխատակազմը աշխատանք է տանում դպրոցը գրավիչ, մաքուր, էսթետիկ և հարմարավետ դարձնելու ուղղությամբ:

**2.3. ԴԴՐՈՑԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ**

Դպրոցը չի գերազանցում իր նախագծային հզորությունը (600 սովորող):

Դասասենյակներում սովորողների թիվը մինչև 25 է՝ ելնելով դասասենյակների մակերեսից:

Աշակերտական սեղանները նախատեսված են երկու սովորողի համար:

2024 թվականի օգոստոսի 1-ին ավարտվել են նորակառույց մարզադահլիճի շինարարական աշխատանքները, կահավորանքը, և 2024 թվականի սեպտեմբերին շահագործման կհանձնվի:

Դպրոցն ունի մարզահրապարակ, որը բարեկարգման կարիք ունի:

**Աղյուսակ 8. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում սեղան-նստարանների դասավորվածության և թվի վերաբերյալ**

| N   | Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Սեղան-նստարանների դասավորվածության ձևը (շարքերով, շրջանաձև, T-աձև, Ու-աձև, խառը) | Սեղան-նստարանների թիվը | Սեղան-նստարանների շարքերի և միմյանց միջև հեռավորությունները |
|-----|--------------------|---------------------------|----------------------------------------------------------------------------------|------------------------|-------------------------------------------------------------|
| 1.  | 1                  | 54,4                      | շարքերով                                                                         | 13                     | 90սմ/20-30սմ                                                |
| 2.  | 2                  | 37,2                      | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 3.  | 3                  | 36,6                      | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 4.  | 4                  | 38,44                     | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 5.  | 5                  | 17,30                     | շարքերով                                                                         | 8                      | 40սմ/20-30սմ                                                |
| 6.  | 6                  | 34,7                      | շարքերով                                                                         | 10                     | 40սմ/20-30սմ                                                |
| 7.  | 7                  | 33,6                      | շարքերով                                                                         | 10                     | 40սմ/20-30սմ                                                |
| 8.  | 8                  | 17,80                     | շարքերով                                                                         | 7                      | 40սմ/20-30սմ                                                |
| 9.  | 9                  | 55,4                      | շարքերով                                                                         | 12                     | 90սմ/20-30սմ                                                |
| 10. | 10                 | 55,6                      | շարքերով                                                                         | 16                     | 90սմ/20-30սմ                                                |
| 11. | 11                 | 37,2                      | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 12. | 12                 | 37,2                      | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 13. | 13                 | 38,5                      | շարքերով                                                                         | 10                     | 40սմ/20-30սմ                                                |
| 14. | 14                 | 55,1                      | շարքերով                                                                         | 13                     | 90սմ/20-30սմ                                                |
| 15. | 15                 | 55,5                      | շարքերով                                                                         | 12                     | 90սմ/10-20սմ                                                |
| 16. | 16                 | 55,2                      | շարքերով                                                                         | 11                     | 90սմ/20-30սմ                                                |
| 17. | 17                 | 56,1                      | շարքերով                                                                         | 16                     | 90սմ/20-30սմ                                                |
| 18. | 18                 | 85,6                      | շարքերով                                                                         | 13                     | 90սմ/20-30սմ                                                |
| 19. | 19                 | 56,4                      | շարքերով                                                                         | 13                     | 90սմ/20-30սմ                                                |
| 20. | 20                 | 45,6                      | շարքերով                                                                         | 13                     | 60սմ/20-30սմ                                                |
| 21. | 21                 | 29,0                      | շարքերով                                                                         | 10                     | 60սմ/20-30սմ                                                |
| 22. | 22                 | 20,0                      | շարքերով                                                                         | 8                      | 40սմ/20-30սմ                                                |
| 23. | 23                 | 20,4                      | շարքերով                                                                         | 8                      | 40սմ/20-30սմ                                                |
| 24. | 24                 | 29,1                      | շարքերով                                                                         | 10                     | 40սմ/20-30սմ                                                |
| 25. | 25                 | 16,74                     | շարքերով                                                                         | 8                      | 40սմ/20-30սմ                                                |
| 26. | 26                 | 35,9                      | շարքերով                                                                         | 12                     | 60սմ/20-30սմ                                                |

|     |    |       |          |    |              |
|-----|----|-------|----------|----|--------------|
| 27. | 27 | 35,7  | շարքերով | 12 | 60սմ/20-30սմ |
| 28. | 28 | 34,5  | շարքերով | 10 | 40սմ/20-30սմ |
| 29. | 29 | 44,66 | շարքերով | 13 | 60սմ/20-30սմ |

### Աղյուսակ 9. Տվյալներ յուրաքանչյուր դասասենյակում մեկ սովորողին ընկնող մակերեսի վերաբերյալ

| Դասասենյակի համարը | Դասասենյակի մակերեսը (քմ) | Յուրաքանչյուր դասասենյակում սովորողների թիվը | Մեկ սովորողին ընկնող մակերեսը (քմ) | Նորմերից պակաս կամ ավել մակերեսը |
|--------------------|---------------------------|----------------------------------------------|------------------------------------|----------------------------------|
| 1                  | 54,4                      | 19                                           | 2,8                                | 0,8                              |
| 2                  | 37,2                      | 22                                           | 1,6                                | -0,4                             |
| 3                  | 36,6                      | 17                                           | 2,1                                | 0,1                              |
| 4                  | 38,44                     | 18                                           | 2,1                                | 0,1                              |
| 5                  | 17,30                     | -                                            | -                                  | -                                |
| 6                  | 34,7                      | 22                                           | 1,5                                | -0,5                             |
| 7                  | 33,6                      | 14                                           | 2,4                                | 0,4                              |
| 8                  | 17,80                     | -                                            | -                                  | -                                |
| 9                  | 55,4                      | 24                                           | 2,3                                | 0,3                              |
| 10                 | 55,6                      | 13                                           | 4,2                                | 2,2                              |
| 11                 | 37,2                      | 16                                           | 2,3                                | 0,3                              |
| 12                 | 37,2                      | 18                                           | 2,0                                | նորմ.                            |
| 13                 | 38,5                      | 19                                           | 2,0                                | նորմ.                            |
| 14                 | 55,1                      | 20                                           | 2,7                                | 0,7                              |
| 15                 | 55,5                      | -                                            | -                                  | -                                |
| 16                 | 55,2                      | 25                                           | 2,2                                | 0,2                              |
| 17                 | 56,1                      | 16                                           | 3,5                                | 1,5                              |
| 18                 | 85,6                      | 20                                           | 4,28                               | 2,28                             |
| 19                 | 56,4                      | 23                                           | 2,4                                | 0,4                              |
| 20                 | 45,6                      | 25                                           | 1,8                                | -0,2                             |
| 21                 | 29,0                      | 19                                           | 1,5                                | -0,5                             |
| 22                 | 20,0                      | -                                            | -                                  | -                                |
| 23                 | 20,4                      | 18                                           | 1,1                                | -0,9                             |
| 24                 | 29,1                      | 19                                           | 1,5                                | -0,5                             |
| 25                 | 16,74                     | 14                                           | 1,1                                | -0,9                             |
| 26                 | 35,9                      | 22                                           | 1,6                                | -0,4                             |
| 27                 | 35,7                      | 23                                           | 1,5                                | -0,5                             |
| 28                 | 34,5                      | 22                                           | 1,5                                | -0,5                             |
| 29                 | 44,66                     | 24                                           | 1,8                                | -0,2                             |

Դասարաններն ունեն 1-3 լուսամուտ: Բնական լույսն ընկնում է ձախ կողմից: Դասասենյակները օդափոխվում են ամեն դասից հետո (ջեռուցման ամիսներին դպրոցում ջերմաստիճանը կայուն բարձր է): Թեև դպրոցի որոշ դասասենյակներում մեկ սովորողին բաժին ընկնող մակերեսը փոքր է, այնուամենայնիվ, դա էականորեն չի խանգարում արդյունավետ աշխատանքին:

Դպրոցի դասասենյակներում աշակերտական նստարանները հիմնականում դասավորված են երեք շարքով: Հնարավորինս նորացված են գրատախտակները:

#### 2.4 . ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆԿԱՐԱԳՐՈՂ ԶԱՓԱՆԻՇՆԵՐ

- Դպրոցի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոսներին, տարեկան առնվազն 2 անգամ իրականացվում են վարժանքներ: Աշխատակազմը և սովորողները

տեղեկացված են հակահրդեհային անվտանգության կանոններին, երկրաշարժի ժամանակ պաշտպանվելու ձևերին, «քիմիական վարակ» ազդանշանների կանոններին:

- Դպրոցի յուրաքանչյուր հարկում առկա են կրակմարիչներ:

- Դպրոցում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետների պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ:

- Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով: Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

- Դպրոցն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով:

- Դպրոցի սանհանգույցները վերանորոգված են, սանհանգույցներ առկա են միայն առաջին հարկում. տղաների համար նախատեսված է 1 սանհանգույց, աղջիկների համար՝ 2: Դպրոցի բոլոր սանհանգույցները ապահովված են հոսող ջրով, հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն): Հաշմանդամություն ունեցող անձանց համար դպրոցում չկա հարմարեցված սանհանգույց: Նորակառույց մարզադահլիճի առաջին հարկում կլինի 1-ը:

Դպրոցում կա ՀՀ ՆԳՆ ՓԾ ԵՓ վարչության պետի և դպրոցի տնօրենի կողմից հաստատված քաղաքացիական պաշտպանության պլան-ժամանակացույց, մշակված է սովորողների և անձնակազմի տարիանման պլան: Դպրոցի նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարիանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով: Դպրոցի տարիանման ուղիները ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով: Դպրոցում չեն օգտագործվում դյուրավառ նյութեր: Դպրոցի ստորին հարկերի պատուհանները վանդակաճաղեր չունեն: Տարիանման հիմնական և պահուստային դռները բացվում են դեպի դուրս և պարբերաբար ստուգվում է նրանց գործածելիությունը:

Դպրոցում պահպանվում են հակահրդեհային անվտանգության կանոնները:

## Աղյուսակ 10. Տվյալներ արտակարգ իրավիճակներում դպրոցի անձնակազմի և սովորողների տեղեկացված լինելու մասին

Դիտարկման ամսաթիվ՝ 15.09.2023թ.-19.05.2024թ.

| № | Զափանիշը                                                                                                                                                                                                         | Կատարել նշում համապատասխան փաստաթղթի և գույքի առկայության մասին (փաստաթղթի անվանումը, առկա գույքը):<br><b>Արձանագրել իրավիճակը</b>                                                                                                                   |
|---|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1 | Դպրոցի աշխատակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին:                                                                                                                 | Տարիանման սխեման մշակված և հաստատված է 2023թ.-ին, և այն փակցված է նախատեսված տեղերում: Առկա են պատգարակ, ռադիացիայի չափման սարք: Դպրոցի նորակառույց մարզադահլիճի 1-ին և 2-րդ հարկերում փակցվել են 2024թ.-ին մշակված և հաստատված տարիանման սխեմաները: |
| 2 | Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակի, հրշեջ տեղեկատուի, հրշեջ ծորակի և այլն) տեղերին ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին: | Առկա են կրակմարիչներ, ռադիոհանգույց: Դպրոցի աշխատակազմը և սովորողները տեղեկացված են հրշեջ ծորակի տեղի մասին, օգտագործման կանոններին տեղեկացված են տեսականորեն:                                                                                       |

Հարցման արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 86%-ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին, իսկ 14%-ը տիրապետում են մասամբ:

**Աղյուսակ 11. Տվյալներ տեղական վտանգների գնահատման, աղետներին (այդ թվում՝ հակաօդային պաշտպանվածության, տարահանման, 1-ին բուժօգնության) պատրաստվածության ու հակազդման մեխանիզմների ուղղությամբ դպրոցում իրականացվող միջոցառումների վերաբերյալ**

| Ամսաթիվը  | Դասարանը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական նյութերն ու պարագաները                                         | Մասնակից սովորողների և աշխատողների թիվը |
|-----------|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------|
| 2023-2024 | X-XII    | Հակառակորդի հարձակման դեպքում աշխատակիցների և աշակերտների պաշտպանության միջոցառումների կազմակերպման ձևերը                | 592                                     |
| 2023-2024 | X-XII    | Հրդեհի տեղայնացման և մարման ձևեր<br>Կրակմարիչների օգտագործման ձևերը                                                      | 544                                     |
| 2023-2024 | X-XII    | Սովորողների և աշխատակիցների պաշտպանության կազմակերպումը երկրաշարժի դեպքում<br>Երկրաշարժի ժամանակ պաշտպանության միջոցները | 561                                     |
| 2023-2024 | X-XII    | Հակաճառագայթային պատսպարման ձևերից օգտվելու վարքականոնները                                                               | 579                                     |
| 2023-2024 | X-XII    | Կենցաղային թունավորումների ժամանակ անհետաձգելի միջոցառումները                                                            | 552                                     |
| 2023-2024 | X-XII    | Պատերազմական իրավիճակում անհրաժեշտության դեպքում ապաստարաններից օգտվելու կանոնները                                       | 579                                     |

**Աղյուսակ 12. Տվյալներ ուսումնական հաստատության քաղաքացիական պաշտպանության պլանից բխող՝ սովորողների և աշխատակազմի հետ տարվա ընթացքում իրականացվող միջոցառումներ վարժանքների վերաբերյալ**

| Ամսաթիվը | Դասարանը | Միջոցառման անվանումը, նկարագիրը և օգտագործված ուսումնական | Մասնակից սովորողների և |
|----------|----------|-----------------------------------------------------------|------------------------|
|----------|----------|-----------------------------------------------------------|------------------------|

|            |                   | <b>Նյութերն ու պարագաները</b>                                                             | <b>աշխատակիցների թիվը</b>                               |
|------------|-------------------|-------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------|
| 15.09.2023 | X-XII             | Դպրոցի սովորողների և ուսուցիչների ուսումնական տարահանման իրականացում                      | Դպրոցի անձնակազմ, սովորողներ 52/554                     |
| 20.09.2023 | Դպրոցի անձնակազմ  | Դպրոցի անձնակազմի հետ ԱԻ և ԶՊ հարցերով ընդհանուր պատրաստություն                           | Դպրոցի անձնակազմ 51                                     |
| 12.12.2023 | Դպրոցի անձնակազմ  | Դպրոցի անձնակազմի հետ ԱԻ և ԶՊ հարցերով ընդհանուր պատրաստություն                           | Դպրոցի անձնակազմ 50                                     |
| 22.12.2023 | X-XII             | Դպրոցի աշակերտների և ուսուցիչների ուսումնական տարահանման իրականացում                      | Դպրոցի անձնակազմ, սովորողներ 52/547                     |
| 16.02.2024 | ԶՊ կազմավորումներ | Հատուկ տակտիկական ուսումնավարժության վերաբերյալ ԶՊ կազմավորումների հետ տեսական պարապմունք | ԶՊ կազմավորումներ 32                                    |
| 19.02.2024 | X-XII             | Դպրոցի աշակերտների և ուսուցիչների ուսումնական տարահանման իրականացում                      | Դպրոցի անձնակազմ, սովորողներ 52/551                     |
| 26.02.2024 | Դպրոցի անձնակազմ  | Դպրոցի անձնակազմի հետ ԱԻ և ԶՊ հարցերով ընդհանուր պատրաստություն                           | Դպրոցի անձնակազմ 50                                     |
| 22.04.2024 | X-XII             | Դպրոցի աշակերտների և ուսուցիչների ուսումնական տարահանման իրականացում                      | Դպրոցի անձնակազմ, սովորողներ 51/557                     |
| 29.04.2024 | Դպրոցի անձնակազմ  | Դպրոցի անձնակազմի հետ ԱԻ և ԶՊ հարցերով ընդհանուր պատրաստություն                           | Դպրոցի անձնակազմ 50                                     |
| 06.05.2024 | X-XII             | Ազդարարում, տարահանում, պատսպարում                                                        | Դպրոցի անձնակազմ, սովորողներ, ՆԳՆ ԵՓՎ ԶՊ բաժին 52/527/2 |

10-րդ (3 ժամ ), 11-րդ (5 ժամ ) դասարաններում ՆԶՊ–ի ժամերին ուսումնասիրվել են «Անվտանգ կենսագործունեության» թեմաները: Ստեղծվել են ԶՊ-ի և ԱԻ-ի համապատասխան կազմավորումներ: Յուրաքանչյուր կազմավորման (կապի, հակահրդեհային, հետախուզական, փրկարարական, հասարակական կարգի պահպանման, բժշկական) հետ տարվել է բացատրական աշխատանք: Ստեղծվել է ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի Ս. Խանզադյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ԱՌՆ և ԱԻ-ում գործելու պլան: Հարցման

արդյունքում դպրոցի աշխատակազմի և սովորողների մոտ 85%-ը տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու կանոններին:

**Աղյուսակ 13. Տվյալներ դպրոցի շենքի ջեռուցման պայմանների մասին**

Դիտարկման ամսաթիվ՝ 01.11-30.11.2023թ., 01.12-22.12.2023թ., 08.01-31.01.2024թ. 01.02-29.02.2024թ., 01.03-10.03.2024թ.

| Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով (գազ) |                                 |                            |                  |
|-------------------------------------------------------------|---------------------------------|----------------------------|------------------|
| Այո                                                         |                                 |                            |                  |
| Դասասենյակներ, միջանցքներ և այլն                            | Ջեռուցման ձևը (վառելիքի տեսակը) | Ջերմաստիճանը շրջայցի պահին | Ջեռուցման ժամերը |
| 1                                                           | գազ                             | 22 <sup>0</sup>            | շուրջօրյա        |
| 2                                                           |                                 | 21 <sup>0</sup>            |                  |
| 3                                                           |                                 | 21 <sup>0</sup>            |                  |
| 4                                                           |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 5                                                           |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 6                                                           |                                 | 21 <sup>0</sup>            |                  |
| 7                                                           |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 8                                                           |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 9                                                           |                                 | 23 <sup>0</sup>            |                  |
| 10                                                          |                                 | 23 <sup>0</sup>            |                  |
| 11                                                          |                                 | 23 <sup>0</sup>            |                  |
| 12                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 13                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 14                                                          |                                 | 21 <sup>0</sup>            |                  |
| 15                                                          |                                 | 12 <sup>0</sup>            |                  |
| 16                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 17                                                          |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 18                                                          |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 19                                                          |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 20                                                          |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 21                                                          |                                 | 19 <sup>0</sup>            |                  |
| 22                                                          |                                 | 19 <sup>0</sup>            |                  |
| 23                                                          |                                 | 19 <sup>0</sup>            |                  |
| 24                                                          |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| 25                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 26                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 27                                                          |                                 | 21 <sup>0</sup>            |                  |
| 28                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| 29                                                          |                                 | 22 <sup>0</sup>            |                  |
| I հարկի միջանցք                                             |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| II հարկի միջանցք                                            |                                 | 20 <sup>0</sup>            |                  |
| Բուժկետ                                                     |                                 | 20 <sup>0</sup>            |                  |

|                       |  |                     |  |
|-----------------------|--|---------------------|--|
| Բուժետ                |  | առկա չէ             |  |
| Գրադարան              |  | 20°                 |  |
| Ընթերցասրահ           |  | Առկա չէ             |  |
| Լաբորատորիա           |  | 20°                 |  |
| ՆՇՊ կաբինետ           |  | Առկա չէ             |  |
| Չենքի պահեստ          |  | 20°                 |  |
| Համակարգչային կաբինետ |  | 21°                 |  |
| Արհեստանոց            |  | 20°                 |  |
| Միջոցառումների սրահ   |  | 21-22°              |  |
| Սպորտդահլիճ           |  | կառուցման փուլում է |  |
